ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի 2026 թվականի 9 ամիսների իրականացված միջոցառումների

Գիտական ուսումնասիրություններ

«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող գիտական ուսումնասիրություններն ուղղված են «Խոսրովի անտառ» պետական արգելոցի, «Խոր Վիրապ» և «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրերի տարածքների բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, գենոֆոնդի ուսումնասիրմանն ու պահպանմանը:

Ինը ամիսների ընթացքում բոլոր աշխատանքները կատարվել են համաձայն 2026 թվականի տարեկան աշխատանքային ծրագրի:

ա) Խոշոր կաթնասուն կենդանիների հաշվառում

«Խոսրովի անտառ» պետական արգելոցում կենսաբազմազանության, կենդանիների իրավիճակի և տարածվածության վերաբերյալ տեղեկատվության ստացման նպատակով կանոնավոր կերպով անցկացվում են խոշոր կաթնասուն կենդանիների որոշ խմբերի ուսումնասիրություններ: «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ը կենսաբազմազանության մոնիթորինգն իրականացնում է Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճուղի հետ համատեղ՝ «Ընձառյուծի պահպանությունը Հայաստանում» ծրագրի շրջանակներում:

2026 թվականին արգելոցի տարածքում ուսումնասիրությունների իրականացման նպատակով սահմանվել է դիտարկման ցանց, որը ներառում է մշտական և ժամանակավոր (սեզոնային) դիտակետերը, երթուղիները՝ դիտարկումների, ստուգայցերի, երթուղային հետազոտությունների և ուսումնասիրությունների անցկացման համար: ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված կենդանիների տարածվածության, տեսակային կազմի, քանակի, բնակության վայրերի, կենդանիների առկա կարգավիճակի ուսումնասիրությունների իրականացման նպատակով՝ արգելոցի տարածքում առկա է 30 ֆոտոթակարդ *(Նկար 1)*: Ֆոտոթակարդները ստուգվում են 2-3 ամիս պարբերականությամբ: Վերջիններից ստացված տվյալների համաձայն որոշ կենդանիների համար կատարվել են քանակի մոտավոր հաշվարկներ և ֆիքսվելու հաճախականությունը կոնկրետ տարածքներում:

Կենդանատեսակների թվաքանակ մոնիտորինգ ըստ ֆոտոթակարդների

ֆոտոթակարդ	Կենդանիների տեսակ											
	Կովկասյան ընծաղյուծ	Բեզոարյան այծ	Գոյշ աղջ	Գայլ	Լուսան	Աղվես	Նապաստակ	Անտառային կատու	Փորսուղ	Քարակեցփոս	Ագիս	Վայրի խոզ
1	0	6	5	3	4	0	2	0	0	0	2	2
2	0	5	4	2	3	0	3	0	0	1	0	3
3	0	0	1	0	0	0	2	0	1	1	1	4
4	0	5	5	0	0	0	0	0	2	0	0	3
5	0	3	2	2	0	3	0	0	1	1	0	5
6	0	0	2	0	2	2	0	0	2	0	1	0
7	0	7	0	0	3	0	0	0	2	0	1	2
8	1	6	0	2	0	1	0	1	0	0	1	0
9	0	0	3	4	1	0	0	0	0	1	0	5
10	0	5	3	0	0	2	0	0	0	0	1	5
11	0	8	4	2	0	1	0	0	0	1	1	4
12	0	0	5	3	2	0	3	0	2	0	1	4
13	0	4	4	0	2	1	0	0	0	0	1	2
14	0	8	3	0	1	2	0	0	0	1	2	1
15	0	7	2	4	1	0	1	0	0	0	2	0
16	0	0	4	3	3	0	0	0	0	0	0	3
17	0	4	1	0	2	2	0	0	0	2	1	0
18	0	3	0	2	3	2	0	0	2	0	1	2
19	0	0	0	0	4	1	0	0	0	0	0	4
20	0	5	3	0	0	0	1	0	0	0	0	0
21	0	4	2	2	3	0	1	0	0	0	0	1
22	0	4	2	2	0	0	0	0	1	1	0	1

23	0	0	0	2	0	0	0	0	1	0	0	3
24	0	2	2	4	0	0	0	0	0	0	0	3
25	0	0	3	4	0	1	0	0	0	0	0	3
26	0	0	5	4	2	1	0	0	0	0	0	0
27	0	2	1	0	3	0	0	0	0	0	0	0
28	0	1	1	0	0	1	0	1	0	0	0	0
29	0	2	0	0	0	1	0	0	0	0	0	0
30	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0

Մոնիտորինգն իրականացվել է ֆոտոթակարդների և տեսանկարահանման կադրերի միջոցով:

Նկար 1



Սեպտեմբեր ամսվա ընթացքում ֆոտոթակարդներով նկարվել է կովկասյան ընձառյուծը (*Panthera pardus tulliana*), ինչպես նաև դաշտային ուսումնասիրությունների ընթացքում արձանագրվել են գիշատչի կենսագործունեության հետքեր, ոտնահետքեր: Կենդանու արեալը հիմնականում ուսումնասիրվում և ընդգրկում է պետական արգելոցի «Խոսրով» և «Կաքավաբերդ» տեղամասերը: Վերլուծությունից պարզ է դարձել, որ նկարված կենդանին ընձառյուծի նույն արու առանձնյակն է, որին ֆոտոթակարդները պարբերաբար արձանագրում են «Խոսրովի անտառ» պետական արգելոցում: Սա

ընձառյուծի առանձնյակի Հայաստանում գրանցված ամենաերկար բնակության դեպքն է, որը փաստում է պետական արգելոցի պահպանության աշխատանքների արդյունավետությունը:

Ներկայումս ընձառյուծը ներառված է ՀՀ կենդանիների Կարմիր գրքում որպես «կրիտիկական վիճակում գտնվող» և Բնության պահպանության միջազգային միության (ԲՊՄՄ) Կարմիր ցուցակում որպես «Վտանգված» տեսակ, ինչի արդյունքում տեսակի պահպանությունը և ուսումնասիրումը շարունակում է մնալ բնապահպանական կարևոր խնդիրներից մեկը:

Նկար 2



Բեզոարյան այծերի *(Capra aegagrus)* ուսումնասիրություններն իրականացվում են կետային դիտարկումների միջոցով՝ ծնի և զուգավորման շրջաններում, որը հաշվառում իրականացնելու լավագույն ժամանակահատվածն է, քանի որ կենդանիները գրեթե ողջ օրվա ընթացքում ակտիվ են լինում, և տարբեր տարիքի և սեռի առանձնյակներին տեսնելու հնարավորությունները քիչ թե շատ հավասար են, հատկապես հասուն արուներինը, որոնք այդ ժամանակ սովորաբար առանձնանում են էգերից և հաճախ նույնիսկ բնակվում են տարբեր վայրերում*(Նկար 3)*:

Նկար 3



Գորշ արջը հիմնականում հանդիպել է չորային նոսրանտառներում: Տարածքը ներառում է այն վայրերը, որտեղ աճում են պտղատու ծառեր, հատապտուղներ և ընկուզենիներ, որոնցով արջը սնվում է:

Նկար 4



ՀՀ ԳԱԱ Երկրաբանական Գիտությունների Ինստիտուտի աշխատակիցները «Խոսրովի անտառ» պետական արգելոցի «Խաչաձոր» տեղամասում կատարել են հնէաբանական և շերտագրական ուսումնասիրություններ:

Նկար 5



ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի Միջատաբանության և բնահողի կենդանաբանության լաբորատորիայի մասնագետները, «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի աշխատակիցների հետ համատեղ, «Խոսրով» տեղամասում իրականացրել են մշտադիտարկման աշխատանքներ:

Նկար 6



բ) Գիշատիչ թռչունների թվաքանակի և տեսակային կազմի որոշում

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում շարունակվում են գիշատիչ թռչունների որոշ տեսակների (սև անգղ, սպիտակագլուխ անգղ, գիշանգղ, մորուքավոր անգղ, քարարծիվ, տափաստանային ճուռակ, սովորական հողմավար բազե) ուսումնասիրությունները: Բների գրանցումն իրականացվում է կանոնավոր շրջայցերի ժամանակ, որի ընթացքում ստուգվում են հին բները, և գրանցվում են նոր հայտնաբերվածները: Հաշվետու ժամանակաշրջանում սև անգղի */Aegypius monachus/* և մորուքավոր անգղի */Gypaetus barbatus/* նոր բնադրավայրեր չեն գրանցվել:

գ) Սողունների որոշ տեսակների տարածվածության և դրանց քարտեզագրման աշխատանքների իրականացում

Սողունների ֆաունան արգելոցում բավական բազմազան է: Ուսումնասիրությունները կատարվել են դիտարկումների մեթոդով, որի ընթացքում արձանագրվել են կովկասյան ագամա, անդրկովկասյան մողեսիկ, հազվագյուտ և անհետացող տեսակներից գրանցվել է միջերկրածովային կրիա /Testudo graeca/: Արգելոցի տարածքում գետերի ափամերձ տեղամասերում գրանցվել է սովորական լորտու և ջրային լորտու: Գյուրզայի ինչպես նաև իժերի ապրելավայրերն օջախային բնույթ են կրում և կախված են ժամանակավոր և մշտական ապաստարանների և կերի առկայությունից:

դ) *Վեդի և Խոսրով գետերի ձկնատեսակների ուսումնասիրում (կարմրախայտ, քուռի բեղլու)*

Գիտական բաժնի կողմից շարունակվում են ուսումնասիրվել Վեդի գետի հունի հարթավայրային մասը՝ Եղեգնավան գյուղից մինչև պետական արգելոց ընկած հատվածը: Վեդի գետում առկա են բազմաթիվ արհեստական եղանակով առաջացած ջրվեժներ, որոնք խոչընդոտում են ձկների սեզոնային միգրացիային: Մանկունք գետում շարունակվում են ծիածանափայլ իշխանի ուսումնասիրությունները, որը նոր տեսակ է համարվում արգելոցի ձկների ֆաունայում:

ե) Հավաքված բուսատեսակների (հերբարիումների) գույքագրում, տեսակային կազմի որոշում և քարտադարանի ստեղծում

Շարունակվում են հերբարիումների գույքագրման աշխատանքները: Հաշվետու եռամսյակում կարվել է 300 և թվայնացվել՝ 112 հերբարիում:

«Բույսերի բազմազանության մշտադիտարկումը ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքներում» ծրագրի շրջանակում, «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի աշխատակիցները կատարել են հետազոտական աշխատանքներ «Խաչաձոր» տեղամասում:

Ուսումնասիրվել են նախկինում տեղադրված փորձահրապարակները՝ նպատակ ունենալով գնահատել բուսական բազմազանության պահպանումը և դրա դինամիկ փոփոխությունները ժամանակի ընթացքում:

Նկար 7



գ) Պետական արգելոցի թանգարանի և գիտական լաբորատորյայի աշխատանքների կազմակերպում և իրականացում

Էկոլոգիական կրթությանն ու դաստիարակությանն ուղղված միջոցառումների շրջանակներում «Խոսրովի անտառ» պետական արգելոց ՊՈԱԿ-ը 750 դպրոցականների համար բնապահպանական թեմաներով կազմակերպել է 40 դասընթացներ: Էկոկրթական միջոցառումների շրջանակում պարբերաբար այցեր են կազմակերպվել

Արարատի մարզի տարբեր դպրոցներ՝ Նոյակերտի միջնակարգ դպրոց, Արտաշատի թիվ 5 հիմնական դպրոց, Վերին Արտաշատի միջնակարգ դպրոց, Նոր Կյանքի և Վանաշենի միջնակարգ դպրոցներ, Այգավանի Միջնակարգ դպրոց, Արարատ քաղաքի թիվ 1 հիմնական դպրոց, Գոռավանի միջնակարգ դպրոց:

Ինը ամիսների ընթացքում պետական արգելոցի թանգարան է այցելել 1605 այցելու: Թանգարանում այցելուներին ներկայացվել է պետական արգելոցի պատմությունը, բուսական և կենդանական աշխարհը, պատմամշակութային հուշարձանները, «Գոռավանի ավազուտներ» և «Խոր Վիրապ» պետական արգելավայրերը իրենց բնորոշ ֆլորայով ու ֆաունայով, ինչպես նաև կազմակերպվել է արգելոցի մասին պատմող կարճամետրաժ ֆիլմի, ֆոտոթակարդների կողմից նկարահանված լավագույն կադրերի դիտում, Arloopa հավելվածի միջոցով կովկասյան ընձառյուծի հետ նկարահանում:

Հաշվետու եռամսյակում կատարվել է նաև թանգարանային ցուցանմուշների ախտահանում:

«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի աշխատակիցները սեպտեմբերի 5-ին և 6-ին մասնակցել են Tour Expo 2026 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին:

Ցուցահանդեսի շրջանակում ներկայացվել են «Խոսրովի անտառ» պետական արգելոցի հարուստ բնաշխարհը, կենսաբազմազանությունը, ինչպես նաև զբոսաշրջային հնարավորություններն ու առաջարկները:



ԲՀՊՏ-ի օրվա կապակցությամբ էկոկրթական հանդիպում է անցկացվել Վեդու ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտների հետ: ԲՀՊՏ-ների դերի ու նշանակության հետ շեշտադրվել են նաև ՊՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող պահպանվող տարածքները: Գիտելիքների ամրապնդման նպատակով անցկացվել են թեմատիկ խաղեր:

Նկար 8



Հայ առաջադեմ երիտասարդություն հասարակական կազմակերպության անդամներն այցելեցին «Խոսրովի անտառ» պետական արգելոցի տարածքում գտնվող Հավուց Թառ վանական համալիր:

Այցի ընթացքում երիտասարդները ծանոթացան արգելոցի յուրահատուկ բուսական և կենդանական աշխարհին, Հավուց Թառի հարուստ պատմությանը, մշակութային ժառանգությանը և հոգևոր նշանակությանը:

Նկար 9



Էկոզբոսաշրջության կազմակերպման և զարգացման աշխատանքներ

«Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ը իր կառավարման ներքո գտնվող բնության հատուկ պահպանվող տարածքներում այցելությունների թույլտվություն և զբոսաշրջային գործունեություն իրականացնում է հիմք ընդունելով առկա սահմանափակումներն ու կանոնակարգերը: «Խոսրովի անտառ» պետական արգելոցում, «Խոր Վիրապ» և «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրերում էկոզբոսաշրջության կազմակերպման և զարգացման հիմնական նպատակներն են՝ զբոսաշրջիկներին ծանոթացնել բնության արժեքներին, նպաստել էկոլոգիական դաստիարակությանը և կրթությանը, բնության հետ հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, բնական միջավայրում մարդկանց վարքականոնի չափորոշիչների մշակմանը, բնության նկատմամբ պատասխանատվության զգացման ձևավորմանը, որոնք էլ իրենց հերթին բնական և պատմամշակութային ժառանգության, էկոհամակարգերի պահպանության բարելավման, ինչպես նաև զբոսաշրջությունից

հավելյալ եկամուտների ստացման, բնապահպանական և սոցիալ տնտեսական խնդիրների լուծման նախադրյալներ են ստեղծում:

Էկոզբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցառումներն, ինչպես նաև զբոսաշրջային կազմակերպությունների և տուրօպերատորների հետ համագործակցությունն իրականացվում է հիմնվելով բնապահպանական սահմանափակումների, զբոսաշրջության նպատակով տարածքի օգտագործման հնարավորությունների և բնապատմական արժեքավոր տեղամասերում արգելոցային և արգելավայրային ռեժիմների պայմաններում թույլատրելի էկոճանաչողական, պատմամշակութային և գիտաճանաչողական զբոսաշրջության կազմակերպման հնարավորությունների վրա: Բոլոր աշխատանքները կատարվել են համաձայն 2026 թվականի տարեկան աշխատանքային ծրագրի:

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում զբոսաշրջային այցեր իրականացվել են «Խոսրովի անտառ» արգելոցի «Գառնի», «Խոսրով» և «Խաչաձոր» տեղամասերում գտնվող երթուղիներով: Այցելուների անվտանգության և արգելոցային ռեժիմի առանձնահատկություններով պայմանավորված «Կաքավաբերդ» տեղամասի որոշ երթուղիները փակ են այցելությունների համար:

Այցելուների անվտանգությամբ և արգելոցային ռեժիմով պայմանավորված՝ քայլարշավային երթուղիները պատշաճ կերպով վերահսկվում են, կազմակերպվում են աղբահանության աշխատանքներ, այցերը կանոնակարգվում են բնական էկոհամակարգերի վրա զբոսաշրջության հնարավոր ազդեցության բացառման նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում համագործակցության շրջանակներում իրականացվել են զբոսաշրջային այցեր «Արմջեո», «Արմենիա թրեվլ», «Համշեն տուր» և այլ կազմակերպությունների հետ համատեղ: Ինը ամիսների ընթացքում «Խոսրովի անտառ» պետական արգելոցն ունեցել է 2384 այցելու: